ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 165 - Ա

ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՎԵՏԻՔ ԲԱՅԱԹՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ, 7-րդ և 9-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 9-րդ հավելվածի 20-րդ կետը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. «ՀՀ Վայոց ձորի մարզի Մարտիրոսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Երջանիկ Մարտիրոսյանին և վարչատնտեսական մասի համակարգող Ավետիք Բայաթյանին 2026 թվականի հուլիսի 3-ին գործուղել ք. Երևան, Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալության (Սիդա) ֆինանսավորմամբ ՍԱԼԱՐ Ինթերնեշնլի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանում ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման բարեփոխումներին» (ԴեաԼոգ) ծրագրի շրջանակներում կազմակերպված աշխատաժողովին մասնակցելու նպատակով:
2. Երջանիկ Մարտիրոսյանի և Ավետիք Բայաթյանի գործուղման հետ կապված ծախսերը (օրապահիկ, ճանապարհածախս) կատարել «ՀՀ Վայոց ձորի մարզի Մարտիրոսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆինանսական միջոցների հաշվին:
3. Երջանիկ Մարտիրոսյանին և Ավետիք Բայաթյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել հաշվետվություն՝ գործուղման հետ կապված ծախսերի և գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2026-07-02 17:45:48 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

2026 թվական հուլիսի 2
ք.Եղեգնաձոր